ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Նարեկ Մկրտչյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Նյու Յորք), 2024 թվականի սեպտեմբերի 23-ից 26-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Կոնկորդիայի համահիմնադիր, նախագահ և գործադիր տնօրեն Մեթյու Սվիֆթ

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն Կոնկորդիայի ամենամյա գագաթնաժողովին՝ որպես պատվավոր հյուր:

   Կոնկորդիայի ամենամյա գագաթնաժողովին մասնակցել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը:

6. **Քննարկված թեմաները.**

   Օրակարգային հիմնական հարցերից էին մարդու իրավունքները, սոցիալական առաջընթացը և նորարար տեխնոլոգիաները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

- Նյու Յորքում անցկացվող Կոնկորդիայի ամենամյա գագաթնաժողովի շրջանակում՝ Սաուդիան Արաբիայում գործող Hevolution հիմնադրամի համահիմնադիր, արքայադուստր Հայա Բինթ Խալեդ Բին Բանդար Ալ Սաուդիի

հրավերով մասնակցել եմ From Lifespan to Healthspan: Time to Act on Aging (Կյանքի շրջափուլից՝ առողջության շրջափուլ. ժամանակն է գործել ծերացման մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ) կլոր սեղան քննարկմանը:
Իմ խոսքում անդրադարձել եմ սոցիալական պաշտպանության ոլորտում սահմանված առաջնահերթություններին՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող քաղաքականության հիմքում շարունակում է լինել ընտանիքի բարեկեցությունը խթանող միջավայրի ստեղծման, ակտիվ, առողջ և արժանապատիվ ծերության պայմանների ապահովման, ինչպես նաև մարդկային կապիտալի զարգացման տեսլականը:
Նշել եմ նաև, որ այս գերակայություններն ամրագրված են սոցիալական պաշտպանության համակարգի առանցքային փաստաթղթերից մեկում՝ Ժողովրդագրության ռազմավարությամբ, որն ուղղված է նաև ավագ սերնդի ներկայացուցիչների մասնագիտական ներուժի արդյունավետ օգտագործմանն ու երկրի սոցիալ-տնտեսական կյանքում նրանց լիարժեք ներգրավվածության ապահովմանը:

- Հանդիպում եմ ունեցել «Հայաստան նախագիծ» (The Armenia project (TAP)) կազմակերպության խորհրդի անդամներ Արդա Նազերյանի և Տատյանա Դեր-Ավեդիսյանի հետ: Հանդիպմանը մասնակցել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Դավիթ Խաչատրյանը:
Քննարկել ենք սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության ուղղությունները: «Հայաստան նախագծի» խորհրդի անդամները ներկայացրեցին իրենց գործունեության հիմնական ուղղություններն ու թիրախային ծրագրերը: Վերջիններս նշեցին, որ կազմակերպության գործունեության առանցքում են հաղորդակցության էկոհամակարգի զարգացմանն ուղղված աշխատանքները, այդ թվում՝ Հայաստանի մասին համընդհանուր իրազեկվածության բարձրացումը՝ սեմինարների, ուսումնական ծրագրերի և տեղեկատվական միջոցառումների միջոցով:

- Ամերիկյան խոշորագույն ServiceNow տեխնոլոգիական ընկերության հրավերով՝ Նյու Յորքի AXIOS House-ում մասնակցել եմ ընկերության կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը: Միջոցառման շրջանակում ներկայացվեցին ServiceNow ընկերության աշխատուժի վերապատրաստման նորարարական լուծումները, որոնց միջոցով կառավարությունները և կազմակերպությունները հնարավորություն են ունենում արդյունավետ կերպով կառավարել աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման գործընթացները, ինչպես նաև արագորեն արձագանքել տեխնոլոգիական և բիզնես միջավայրի փոփոխություններին:
Միջոցառման ընթացքում ոլորտային մի շարք հարցերի շուրջ քննարկումներ եմ ունեցել կառավարման և բարեփոխումների հարցերով ՄԱԿ-ում Ամերիկայի

Միացյալ Նահանգների ներկայացուցիչ, ԱՄՆ աշխատանք դեպարտամենտի նախկին ղեկավարի տեղակալ Քրիս Լուի հետ:

- Հանդիպել եմ «Libra Group» ընկերության նախագահ Ջորջ Լոգոթեթիսի և նրա տիկնոջ՝ Սելենի ինստիտուտի ղեկավար Նիցիա Լոգոթեթիսի հետ:
  Հանդիպման ընթացքում քննարկել ենք համագործակցության շրջանակի ընդլայնմանն առնչվող մի շարք հարցեր. ընդգծվել է համատեղ աշխատանքների շարունակականության կարևորությունը՝ երիտասարդների մասնագիտական կարողությունների զարգացման, արտերկրում ուսանողների համար աշխատանքային պրակտիկայի հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակման ուղղություններով:
  Խոսել ենք նաև համատեղ իրականացվող ծրագրի մանրամասների մասին, որի շրջանակում հայ ուսանողներին հնարավորություն է տրվում աշխատանքային փորձառություն ձեռք բերել ԱՄՆ-ում և այլ երկրներում՝ այլընտրանքային էներգիայի, ներդրումների, ավիացիայի, սպասարկման և այլ բնագավառներում գործունեություն ծավալող «Libra Group»-ի ընկերություններում: Կարևորել եմ նաև համատեղ իրականացված աշխատանքների արդյունքում «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի սաներին և ներկայացուցիչներին «Կոնկորդիայի գագաթնաժողովին» մասնակցելու հնարավորության ընձեռումը:

- Կոնկորդիայի ամենամյա գագաթնաժողովին մասնակցության շրջանակում հանդիպել եմ նաև Արաբական ծոցի զարգացման տարածաշրջանային հիմնադրամի ղեկավար (AGFUND), Երեխաների զարգացման արաբական խորհրդի նախագահ Սաուդյան Արաբիայի արքայազն Աբդուլազիզ բին Թալալ Ալ Սաուդի հետ, որի ընթացքում քննարկել ենք սոցիալական պաշտպանության ոլորտում համագործակցության ուղղությունները, մասնավորապես՝ դիտարկելով երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում համատեղ աշխատանքների իրականացման հնարավորությունները:

- Արժանապատիվ աշխատանքի ապահովման, աշխատողների իրավունքների պաշտպանության և ծայրահեղ աղքատության վերացմանն ուղղված գլոբալ նախաձեռնություններում համագործակցելու նպատակով՝ հանդիպում եմ ունեցել հանրահայտ երգիչ Ալոե Բլաքի հետ, ով ակտիվ համագործակցում է Աշխատանքի միջազգային կազմակերպության հետ՝ արժանապատիվ աշխատանքի, աշխատողների իրավունքների պաշտպանության և ծայրահեղ աղքատության վերացմանն ուղղված գլոբալ նախաձեռնություններում:
  Ալոե Բլաքը կարևորեց Հայաստանի անդամակցությունն Աշխատանքի միջազգային կազմակերպության Սոցիալական արդարության գլոբալ

կոալիցիային և պատրաստակամություն հայտնեց այցելել Հայաստան՝ սոցիալական արդարությանն ուղղված համաշխարհային արշավի շրջանակում: Հանդիպման ընթացքում երկուստեք կարևորվեց սոցիալական արդարության և աղքատության հաղթահարման ընկալումների հանրայնացման անհրաժեշտությունը՝ պայմանավորվածություն ձեռք բերելով համատեղ անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել այդ ուղղություններով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

- Արքայադուստր Հայա Բինթ Խալեդ Բին Բանդար Ալ Սաուդիի հետ ունեցած զրույցի շրջանակում պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկայում դիտարկել ակտիվ ծերացման տեսլականի իրականացման ուղղությամբ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

- «Հայաստան նախագիծ» կազմակերպության խորհրդի անդամներ Արդա Նազերյանի և Տատյանա Դեր-Ավեդիսյանի հետ հանդիպման ավարտին պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ աշխատանքներ իրականացնել հաղորդակցության ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագիտական կարողությունների զարգացման, ինչպես նաև ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց տրամադրվող աջակցության ծրագրերի հանրային իրազեկվածության բարձրացման ուղղություններով:

- Libra Group» ընկերության նախագահ Ջորջ Լոգոթեթիսի հետ հանդիպմանը պայմանավորվել ենք շարունակել քննարկումները՝ համատեղ իրականացվող ծրագրերի արդյունավետ ընթացքի ապահովման, ինչպես նաև «Կոնկորդիա՝ Հայաստան»-ի իրականացման ուղղություններով:

- Արաբական ծոցի զարգացման տարածաշրջանային հիմնադրամի ղեկավար, Երեխաների զարգացման արաբական խորհրդի նախագահ Սաուդյան Արաբիայի արքայազն Աբդուլազիզ բին Թալալ Ալ Սաուդի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղել ջանքերը խնամատարության ինստիտուտի զարգացման, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակման ուղղություններով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

10/4/2024

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Ստորագրությունը, Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 **ամսաթիվը:**

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 28.08.2024թ-ի 776-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

ՀՀ ԱՍՀ նախարար՝ Նարեկ Մկրտչյան

4. Գործուղման վայրը-***Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Նյու Յորք***

5. Գործուղման ժամկետները ***23.09.2024թ-26.09.2024թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

ճանապարհածախս, գիշերավարձ

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- ***ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը***
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		***Մկրտչյան Նարեկ***	***Ընդամենը (հազ. դրամ)***
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը **(էկոնոմ դաս,** բիզնես դաս)	-	-
	Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ)	-	-
Գիշերա-վարձի հաշվարկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-
	Օրերի քանակը	-	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	140	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54,285	-
	Օրերի քանակը	4	-
	Ընդամենը վճարվել է (դրամ)	***217,140***	***217,140***
Այլ ծախսեր	-	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր	-	-
	ապահովագրության վճար	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			***217,140***

****օրապահիկի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «20» «սեպտեմբերի» 2024 թվականի 1 դոլարին համարժեք 387.75 ՀՀ դրամի չափը***

ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ